Արձանագրություն N 2

«ԿՏԱԿ-ԲԸԱՀԾՁԲ-16/1» ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք.Երևան, Վրացյան 73,
«Կրթական տեխնոլոգիաների
ազգային կենտրոն» ՊՈԱԿ

25.03.2016թ.
ժամը 11:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովը նախագահող Սիրուն Ավետիսյան, հանձնաժողովի անդամ՝ Սոնա Գևորգյանը, քարտուղար Լիլիթ Գևորգյանը, «Լոկա» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Անի Սարգսյանը և «ՀայԱրմ Տուր» ՍՊԸ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Իզաբելլա Աբազյանը:

«ԿՏԱԿ-ԲԸԱՀԾՁԲ-16/1» ծածկագրով առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգի հայտերի բացման մասին

1. Հանձնաժողովը նախագահող Ս. Ավետիսյանը 25.03.2016թ. ժամը 11:00 առանց գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու բանակցային ընթացակարգի հայտերի բացման նիստը հայտարարեց բացված և հրապարակեց գնման առարկայի ընդհանուր (նախահաշվային) գինը՝ մեկ թվով արտահայտված՝ 1200000 (մեկ միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ:

2. Գնումները համակարգող Լ.Գևորգյանը հայտարարեց, որ հայտ է ներկայացրել երեք մասնակից և հանձնաժողովը նախագահող Ս. Ավետիսյանին փոխանցեց հայտերի գրանցամատյանը, դրա անբաժանելի մասը հանդիսացող մյուս փաստաթղթերը և գրանցված հայտերը.

ա/ «Արմենիա Թրավել+Մ» ՍՊԸ – ք. Երևան, Վարդանանց 4, հեռ. 010 56 36 67, էլ. փոստ. info@armeniatravel.am,

բ/ «Լոկա» ՍՊԸ – ք. Երևան, Մ. Մաշտոցի 38, հեռ. 010 50 02 27, էլ. փոստ locatravel@mail.ru,

գ/ «ՀայԱրմ Տուր» ՍՊԸ - ք. Երևան, Նուբարաշեն 2 ա շենք, բն. 20, հեռ. 010 55 61 65, էլ. փոստ՝ hayarm.tour@gmail.com:

3. Ուսումնասիրելով հայտերը, դրանցում գտնվող փաստաթղթերը և լրացնելով գնահատման թերթիկները (կցվում են)՝ հանձնաժողովը եզրակացրեց, որ՝

- **«Արմենիա Թրավել+Մ» ՍՊԸ-ի ներկայացրած՝**

ա/ հայտը պարունակող ծրարը կազմված և ներկայացված է սահմանված կարգին համապատասխան,

բ/ առկա են հրավերով պահանջվող (նախատեսված) փաստաթղթերը և կազմված են հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխան,

Ընդունվել է որոշում՝ կողմ - 2, դեմ – 0:

- **«Լոկա» ՍՊԸ-ի ներկայացրած**

ա/ հայտը պարունակող ծրարը կազմված և ներկայացված է սահմանված կարգին համապատասխան,

բ/ առկա են հրավերով պահանջվող (նախատեսված) փաստաթղթերը և կազմված են հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխան,

Ընդունվել է որոշում՝ կողմ - 2, դեմ – 0:

- **«ՀայԱրմ Տուր» ՍՊԸ-ի ներկայացրած՝**
  - *ա/ հայտը պարունակող ծրարը կազմված և ներկայացված է սահմանված կարգին համապատասխան,*
  - *բ/ առկա են հրավերով պահանջվող (նախատեսված) փաստաթղթերը և կազմված են հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխան,*

Ընդունվել է որոշում՝ կողմ - 2, դեմ – 0:

4. Ներկայացվեցին մասնակիցների առաջարկած գները.

ա/ «Արմենիա Թրավել+Մ» ՍՊԸ – 1516000 (մեկ միլիոն հինգ հարյուր տասնվեց հազար) ՀՀ դրամ:

բ/ «Լոկա» ՍՊԸ – 1181600 (մեկ միլիոն մեկ հարյուր ութսունմեկ հազար վեց հարյուր) ՀՀ դրամ:

գ/ «ՀայԱրմ Տուր» ՍՊԸ – 1044000 (մեկ միլիոն քառասունչորս հազար) ՀՀ դրամ:

5. Նիստին ներկա մասնակիցների միջև բանակցություններ տեղի ունեցան: Բանակցությունների արդյունքում «ՀայԱրմ Տուր» ՍՊԸ-ն առաջարկեց **1024000 (մեկ միլիոն քսանչորս հազար)** ՀՀ դրամ, «Լոկա» ՍՊԸ-ն առաջարկեց՝ **1023000 (մեկ միլիոն քսաներեք հազար)** ՀՀ դրամ:

6. Հանձնաժողովը որոշեց մերժել «Արմենիա Թրավել+Մ» ՍՊԸ-ի հայտը, քանի որ ներկայացված գնային առաջարկը գերազանցում է նախատեսված ֆինանսական միջոցների չափը:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 2, դեմ – 0:

7. Ներկայացված գնային առաջարկի հիման վրա հանձնաժողովը որոշեց՝

Ընտրված մասնակից ճանաչել **«Լոկա» ՍՊԸ**-ին:

Երկրորդ տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել **«ՀայԱրմ Տուր» ՍՊԸ**-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 2, դեմ – 0:

8. Հանձնաժողովը նախագահող Ս. Ավետիսյանն առաջարկեց պայմանագիր կնքելու վերաբերյալ առաջարկ ներկայացնել **«Լոկա» ՍՊԸ**-ին: Հանձնաժողովն ընդունեց Ս. Ավետիսյանի առաջարկը:

Ընդունվել է որոշում՝ կողմ – 2, դեմ – 0:

Հանձնաժողովը նախագահող՝		Ս. Ավետիսյան
անդամ՝		Ս. Գևորգյան
քարտուղար՝		Լ. Գևորգյան